

կալս՝ նրա մահուան ցնցող լուրը ինչ հեզութիւն էլ ինչ տարօրինակութիւն... Թատերախաղը, որի գործողութիւնը հանգ. վրդ-ի ծննդավայր կարինուսն է տեղի ունենում... վաղը ներկայացուելու է բնաշխարհի նշանաւոր քաղաքէն 6-7 հազար մղոն հեռու մի փոքրիկ գաղթավայրում...

Հանգ. Տիրոյեան Հօր ցաւառիթ մահուան լուրը պիտի յատկապէս հաղորդենք հանդէսին ներկայ եղող հասարակութեան, և նորա օրհնեալ յիշատակը յարգենք յոռեկայս Թարգանօք. Զերդ վշտակից

Յ. ՏԵՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Սուրբայա. 25 Հոկտ. 1926

## Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

### ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես բազմ. 1926, էջ 316)

## ՃԿԶ.

Հետեւեալ թուղթին ակնարկը կը վերաբերի Պոլսոյ Վենետիկեան Դեսպանին, ինչպէս նաժակին ընթացքին պիտի տեսնուի արդէն: Նամակագիրը կը տեղեկագրէ նաև յիշեալ Դիւանագէտին հանդէպ ցոյց տրուած նշանակալից պատուասիրութիւն մը մերայնոց կողմանէ, որ այնքան նախանձ շարժած է հակառակորդներու:

Քերամեմօր Տեսան Տեսան Սրբազան քաջ հովուիդ Ստեփաննոսի  
Պատուածարանութեան վարդապետիդ և մեծի Աբրայիդ ողջոյն խոնարհադէմ մատուցի

ի կոստ. յամի 1754 ի մայիսի 19

... ի յանցեալ ամսոյն իջուցին ի ծով զիւլամպաուի նաւ մի, որ ի Թազաուրու-թեան տանկաց շէր բնաւ տեսեալ ի Ֆէնէր՝ ի տանն ասկէրեանց առ ի տեսանել զտն-սիլն զայն զարհուրելի: Բայց չեղև հնար՝ զի նա թէպէտ կամեցաւ զալ, այլ քափթթանսն յղեալ մարդ՝ հրաւիրեաց ի տուն իւր: Վասն որոյ չկարացեալ զդէմ ունիլ՝ գնալ ի տուն նորա: Եւ յետ սակաւ աւուր դէպ եղև անցանել արքունի ձիոց ընդ այն, և կոչել մեր զնա հանդերձ երեւեօք նորա. և ցուցանել մեր զարարողութիւնն տանկաց, ընդ որ յոյժ զուարճացաւ անձն նորա: Եւ յետ անցանելոյն ձիոց պատրաստեցաք նմա՝ (իրաւի) սեղան արքունի. զտունն աւուր յառաջ մաքրելով և զարդարելով որպէս և վայելուչն է: Եւ ընդ մեր պատիւն այնքան բերկրեցաւ, որ հաստատեաց բանիւ ի կոստանդնուպոլիս չտեսեալ զայնպիսի պատիւ և զսեղան: Եւ եկաց առ մեզ զօրն ողջոյն. և ապա չուեաց գնաց ի

Պ պալատ իւր: Իրաւի դղրդեցաւ կոստանդնուպօլիս և յոյնք յիմարեցան, և հայք զուար-  
հացան, զի մեծ պատիւ եղև Հայոց, զի բնաւ ի մէջն չէր արարեալ աշտպիսի իր ուրուա-  
ղաղմադացւոց ազգին... Բայց զայս յատկաբար դասպանն մեր արար՝ զի փառաւորեսցի  
ազգս մեր և յոյնք նախատեսցին. զի քաջ ծանեաւ գլուխաց մեզ չկամենալն բարի: Եւ  
նա փոխարէնն արար մեզ գմե՛ք ընդունելու՞թիւն, և առնելոց իսկ է այլևս...:

Նուաստ անարժան  
Աթանաս վարդապետ

## ՃԿԷ.

Չէ նշանակուած նամակին մէջ փաշային անունը՝ որոյ մասին ջահելկան  
տեղեկութիւններ կը տրուին. և կ'ենթադրուի անշուշտ նամակին ընթացքէն՝ որ  
այստեղ այլազգի փաշայ մը չէ ան, այլ քրիստոնեայ նահանգապետ մը կամ կու-  
սակալ մը:

Գերապայծատ և գերայարգ Տեառն իմոյ  
և Արքանօրս Ստեփաննոս վարդապետի

... հարկ եղև ինձ յայց առնել փաշայի երկրիս. և սիրով ընկալաւ և էհարց բա-  
զում ինչ, լատիններէն և ուլահերէն. և ես ըստ կարեաց իմոց մեծաւ խոնարհութեամբ  
եռու պատասխանի. և ասաց թէ ինքն ևս պաշտպան լինելոց[է]կրօնին մերոյ: Սէզրէ-  
ղարն փաշային ասաց ինձ առանձին թէ փաշայն ևս կամի լինիլ եղբայր կրօնին մերոյ.  
որպէս և է եղբայր յիսուսեան կարգին, և Ֆրանչիսկանաց. ուստի ծանուցանեմ գերայր-  
գութեանդ, թէ որպէս կամի գերայրգութիւնդ և յայնժամ ես յղեմ փօստով զկերպն  
զրելոյ եղբայր լատիններէն յիսուսեան կարգին, նաև զանուան գրութիւն փաշային. փա-  
շայն բերանով իւրով խղրեաց յինէն բերել ի վէնէտիքու պոէվիարիում կարգին Ֆրան-  
չիսկանաց, չորս հատոր խոշոր գրով, սև կողով ոսկեջրած հանդերձ նոր սրբովք ուն-  
կարիայոյ և դրանսիլֆանիոյ. Աղաշայ Պիրոճն ասաց թէ քաղաքն վճարէ զգինն. միայն  
խղրեմ հոգալ, քանզի միանգամ ևս երբ Աղաշայ մարտիրոսն, բայց մանր գրով էր և  
ոչ ունէր զգեղեցիկ տիպ: Բայց տոյնս եղիցի հաստազոյն թղթով և խոշոր գրով: Նմա-  
նապէս երկրորդ խորհրդականն փաշային խղրեաց բերել ի վէնէտիքու զպատկերսն աս-  
տուածաշնչի հին և նոր կտակ[կա]րանի չարշէֆէով ոսկի թփուղով. ի ներքոյ իւրաքան-  
չիւր պատկերացն վկայութիւն աստուածաշնչին լատիններէն գրած: Զգինն այսորիկ ևս  
քաղաքն վճարէ, այսինքն Աղաշայ պիրոճն: Աղաշայ պիրոճն ևս խղրեաց ինքեան բե-  
րել հայերէն գրած պատկերքն Աստուածաշնչին չերշիֆէով...:

Յամի տեառն 1754  
յուլիսի 1  
[Հայաքաղաք]

Նուաստազոյն ծառայ  
Հ. Ղազարոս կրօնաւոր

## ՃԿԸ.

Այսօր քիւմիսի ուրիշ մէկ նամակն ասա. կը գրէ այս անգամ Զմիւռնիայէն, ուս-  
կից յետոյ Պոլիս պիտի անցնէր: Թղթին սկիզբը երկու տեղ քով քովի մաշած ըլ-

ալով՝ կէտէր դրինք, Հետեւելով իր վարուց պատմութեան ու նկատելով մաշած տեղերու մնացորդ տառերը՝ կ'եզրակացնենք, որ յիշեալ Առաջնորդն է՝ Սահակ Ահապին, որ դեռ այն ատեն իր բարեկամն էր, զոր և ինքը կ'ակնարկէ անշուշտ խղիւղաբայ անուամբ։ Համբաւաւոր քաղաքի մ'ըլլալով Սարգիս արք. Սարաֆեան՝ սոյն քաղաքին մէջն ալ ցոյց կու տայ իր մեծ յատկութիւնը։

Նամակիս մէջ հոն կատարած իր առաքելութեան վրայ կը խօսի, ինչ որ կը յաւելու մանրամասնութիւն մը իր կենսագրականին վրայ։

### Տեառն Տեառն Ստեփաննոսի Սրբակրօն Արքայ՝ մտերիմ և սեր սիրով ի Գլխատու Յիսուս Սղլոյն ընծայեմ

Նաւարկեալ ի լիօնեայու ժամանեցաք Տերամբ 30 օրն ի Քաղաքս գմիւռին, և աստ գտեալ զՎե[.]կ[.]յե[.]բայ մեր [..]ալ վերստին Առաջնորդ, ընկալեալ եղաք ի սմանէ ի վեր քան զոր վարկէաքն ողջամբ, և ի բնաւից տեղացւոց յոյժ մարդաւ սիրապէս և մեք ևս առ ի չտանիլ դէպ առ նոսա իբր տմարդի բարեկամ և անողնունաւ տու հիւր, ոչ թողուեք ի բաց գմիթաբելն զնոսա յեկեղեցւոյ հոգեւորական բանեւք ըստ կարեաց և ըստ պիտոյին երեմիապէս, շխտորելով ամենեւին յարքունական պաղտայէ ուղղականէ ի յանգստեան ծայրս հակադրականի կողմնականութեան երբէք, ըստ որում յայտնի իմն է տեսողաց և լսողաց։ Եւ լինի թէ ո՞րտէ մինչև յերիս ամիս եթէ Տէր կամեսցի աստ օթազայիմ, զի յիշեցեալ Պետոս աշ կամի թոյլատրել փութով զնալ մեզ ի կոստանդնուպոլիս առ ի զովացուցանել զտապն վաղեմի կարօտութեանց մերոց, և մանաւանդ թէ ընդ նմա և ժողովուրդքն ըստ մեծի մասին զնոյնն յառաջնորդին մեզ աղաչանօք, առ որս բաց ասելն կոպտութիւն իմն է յոյժ մեծ։ Եւ Պատրիարք յակօր վարդապետն ևս զրեաց առ մեզ ի ձեռն յիշեցելոյն զգիր սիրոյ և յարգանաց. բայց մեք չպատասխանեցաք նմա բան ինչ մինչև ցայժմ. և մի վարկից այս լինիլ աղաքաւ ըմբոստանալոյ, այլ վասն այլ իրի իմեք՝ որ է մասնաւոր համանկատումն ինչ. քանզի ասէ ոմն ի բանաստեղծից այլազգեաց. կէսն օլուր աշըքը չէյ տայէ տիւշէր իստղոնաւ Տեղւոյս ամենայն իրքն և իրակութիւնք վայելն զբարի յաշողութիւնս, միայ միայն՝ թէ սակաւ ինչ երկեցուցանէ զոգոունս շուկն մահուան, զոր թէ և իցէր նուազ, յուսամ յԱստուած թէ այսուհետեւ իսպառ սպառեցոյ է ամենեւին. եւ թէպէտ զառաջին քստմիլի տեսանեցան ոմանք ի մերայնոց զէմպէրէկաբեկից հանդերձ պատրօքն տեղւոյս վասն մտանելոյ իմ յեկեղեցին Հայոց, իսկ մինչ յարեցան և խօսակցեցան ընդ մեզ ի ձեռն յաճախ երթեկութեան, զիշան ի կարծեաց և ի կասկածանաց իւրեանց, և հետեաբար ունին զիս իբրեւ զիւրեանս. բայց բոլոր ամբողջ և ուրիշ ուղղապիտօքն իբրեւ տեսին և իմացան զայս՝ զրեթէ ի մեծի ուրախութեան պարօրեանք եղնն, և զհացան որ այլապէս ոչ եղէ. վասն զի յետ կորուստանելոյ զչաւն, հետեւի յայնմանէ մեծագոյն փնաս, որպէս յայտ է ինքսին։ Օրհնեալ լինիցի տեղւոյս Յովսէփ վարդապետն միսոյն նար՝ որ է համաձայն մերային դիտմանց, և պատեհրագմակից է ընդ մեզ ընդդէմ ներհակ կարծեաց ըստ ամենայնի, որոյ վասն առաւել սեր և պատիւ եցոյց և ցուցանէ միշտ դէպ առ անարժանութիւնն իմ. նոյնգունակ օրհնեալ խոնայ նահապետն ամպաւրեան, և պարոն Աստուածն ցաւակիր։ Բայց քէօշէ պոնակի քրթմաշնն յոմանք՝ ի ծաւոնկ՝ զաղատացիք ամենայնիմաք, բայց զտանին նոցա ըմբերասողք բազումք, որոյ վասն և զխաւովք նոցին զան և զնան առ իս, և մեք շահեմք զնոսա բարոյականաբար, թէ չունի փնաս մտանելն յեկեղեցին Հայոց։ Վերջապէս վասն սուղ լինելոյ զրոյս ժամանակի՝ ոչ կարացի յատուկ գրով ինչ ողջունել զՎհապատիւ Մինաս Արհն զՀայրն մեր ծերունի և կամ հարցումն առնել զամենայն կրկա բարեկեցութենէ նորին. վասն որոյ զնոյն պարտաւորութիւնն իմ սոյն գրով ի ձեռն Յարգելութեան ձերայ վճարել

տենջամ, ընծայելով նմա գիրկցածիւր ողջոյնն, և խնդրելով ի նմանէ զսուրբ աղօթս փոխարէն: Զնոյնն ասեմ և վասն բնաւից համաշունչ միաբանից Սրբոյ Մենաստանի՞՞ք՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս: Պարոն խաչուկ սիրեցելոյն իմ և ձեր՝ սիրով մեծաւ ողջոյն ընծայեմ ի Քրիստոս: Հայր Արքեպիսկոպոսն սերտ սիրով ողջոյն ընծայեմ. բաւ է:

1754 ի յունիսի 17

Սարգիս Վրդ. և Արքեպիսկոպոս  
ի Զմիւռին

## ՃԿԹ.

Սարսափելի երկրաշարժի մը նկարագրութիւնը կը կարդանք Հ. Զաքարիայի հետեւեալ թուղթին մէջ: Ունի Հ. Միքայէլ ևս նոյնին նկարագրութիւնը, ուր «իբրեւ որորմեայ սաղմոսի չափ տեւաց» կ'ըսէ՝ նոյն օր պատահած երկրաշարժներէն միոյն համար, ինչպէս նաև կրկինը կը նշանակէ տեղի ունեցած մահերուն, ըսելով թէ «աւելի քան զհազարս մարդիք մեռան», թերևս միանգամայն առնելով զանազան պահերու մէջ եղածները:

Գերամեծաւ գերյարգելի Արքայնոր մերոյ և բարեմայակետի  
Տեառն Տեառն Ստեփաննոսի Վարդապետի խնդալ ի տէր

... ի սեպտեմբերի 2, եղև շարժ մեծ ի ստամպոլ (յայն օր գրեթէ ոչ բնաւ դադարեցաւ) և կործանեցան և փլան քնակիրպինայք. եյտի խուլէին միոյն կէսն վերուստ ի վայր փլաւ, զոր և աչօք տեսի. երկուցն ևս մի մի անկիւնքն ի վերին կողմն փլան. և 2 հոգիւք ի փլատակսն կորեան. բազում մինարէից շէրիֆէէն ի վեր փլան. և ոմանք ծոնցան, և կէսք բոլորովին փլան. չարսըն և խաներուն պատերն ճաթոտեցան, ոմանք խանք և բաղանիք փլան. սուլթան մէհմեմէտ ճամիսին գրեթէ պէրպատ եղև. բիւրիկք բազում փլան. ի ստամպոլ աւելի քան զհինգ հարիւր ոգիս ի փլատակսն կորեան: Հոչոյ պատառումն շարժման այս եղև ի յատապազարն, որ ատապազար բոլորովին ամենայն շինուածովքն և մարդկամքն կորեալ են, և ի տեղին շուր բղինալ է: Յայն ատապազարին կողմանս և այլ գիւղք աւեր եղեալ են, և անհամար ոգիք մեռեալ: Այս 15 օր է, դեռ շարժն ոչ դադարի. յամենայն օր մի կամ երկու և երեք անգամ փոքր փոքր շարժք լինին...

Յամի տեառն 1754

Սեպտեմբերի 17

[Կ. Պոլիս]

(Շարահանկելի)

Նուստ ծառայ

Հայր Զաքարիայ

Հ. ՂԵՌՈՒՄ ՏԱՅԵՆՆ

